ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ
ՊԱՐՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎԻԿԻ ԵՍԱՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա, 40/1, 21)

Հարգելի պարոն Եսայան,

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն) 2022 թվականի մայիսի 13-ին «Տմտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի առերևույթ խախտման մասին հաղորդում է ներկայացրել Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (այսուհետ նաև՝ Հանձնաժողով):

Գրությամբ մասնավորապես նշվել է, որ

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկությունները.

1. ստացել եք արդյոք Ընկերության կողմից բարձրացված հարցի վերաբերյալ ծանուցումներ,
2. եթե ստացել եք, ապա ինչ եք պատասխանել Ընկերությանը,
3. եթե ստացել եք և չեք պատասխանել՝ ներկայացնել պատճառները և հիմնավորումները:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Համակենտրոնացումների, պետական օժանդակության և
պետական գնումների վերահսկողության բաժին
Կատարող՝ Աննա Կոստանյան
Հեռ՝. (+374 60) 830 840 (233)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 8 հուլիսի 2022 թվական: